**Ձև N 5.5.1**

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 83

*հերթական համարը*

*Նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների վերաբերյալ (ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությանը)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքը (Ջրաբեր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

| Մարզ, համայնքը, բնակավայրը Հողամաս(եր)ի մակերես(ներ)ը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամաս(եր)ի նպատակային և գործառնական նշանակություն(ներ)ը | Փոփոխությունից հետո հարկայնությունը/հապավումն ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման N 2 հավելվածի կառուցապատման չափորոշիչների աղյուսակի, հապավմանը համապատասխան չափորոշիչները (կառուցապատման տոկոսը, կանաչապատման տոկոսը, կառուցապատման խտությունը) |
|---|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի (Ջրաբեր բնակավայր)<br><br>07-055-0215-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.05 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք | 07-055-0215-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0.05 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր | Համաձայն Կոտայք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի |

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | **Ե. Վարդանյան** |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | **Լ. Առաքելյան** |

Երևան, «13» «մարտի» 2026թ.

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ կադաստրի կոմիտեի գրություններով ներկայացված պայմանները (կցվում են):

4. Բյուրեղավան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Ջրաբեր բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի (Ջրաբեր բնակավայրը) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները: